



# Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ՎԵՐԱՓՈՒՈՒՄԷՆ ԵՏԲ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

21 ՕԳՈՍՏՈՍ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ

(11.30-12.4)

**Ա**րդար գործերու վարձքը կեանք է. անօրէնները վաղահասօրէն պիտի կորսուին: Երբ արդարը

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի...

հազիւ կը փրկուի, ի՛նչ պիտի ըլլայ ամբարիշտին ու մեղաւորին վիճակը:

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի.

յանդիմանութիւն ատողը անմիտ է: Լաւ մարդուն՝ Տէրը շնորհք կու տայ, մինչ կը դատապարտէ չարամիտը: Չարութիւնը մնայուն յաջողութիւն չի բերեր, մինչ արդարներու արմատը ո՛չ ոք կրնայ շարժել: Առաքինի կին մը ամուսինին համար թագ է, մինչ անպատիւ կինը անոր ոսկորները կրծող խլիրդի կը նմանի:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(6.16-7.1)

**Ա**րդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց

հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա թէ ինչո՛ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անշատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ, ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ»:

... մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

#### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(1.39-56)

**Ն**ոյն օրերուն Մարիամ ճամբայ ելլելով աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով Եղիսաբէթի ողջոյն տուաւ:

Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաճայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ

«Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն...»

որհնեալ է զաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՞նչ երջանկութիւն, որ Տիրոջ մայրը ինծի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին»:

ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ.

«Ինչպէ՛ս Տէրը գովաբանեմ. ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոմով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեղութիւնը:

«... ան տեսաւ իր աղախինին հեղութիւնը»:

մեծամեծ գործեր կատարեց. Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր զօրաւոր բազուկով ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, որովհետեւ յաւերժական ողորմութիւն խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

«... Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ»:

«Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները»:

«Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները»:

«Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները»:

Մարիամ շուրջ երեք ամիս եղիսաբէթի մօտ մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

Այժեւե՛ժէ՛ք  
ԵԿԵՂԵՑԻՅՍ  
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՆ  
ԵՒ  
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ  
յԱՅՏԵՑԷՔ (like).  
[www.facebook.com/  
SourpHagopChurch-  
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)  
Այժեւե՛ժէ՛ք ԱԵԻ  
Ս. ՅԱԿՈՒԲ  
ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԱՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅ  
ԿԱՅԲԷՁՆ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ  
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝  
514 331 5445 x202 ԹԻՒՆ